

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10**  
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

06.06.2003թ.

ժ. 11.<sup>00</sup>

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան (*Խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*Խորհրդի քարտուղար*)

**Հրավիրված էին՝**

Ա. Հայրապետյան (*ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար*), Զ. Սիրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Ն. Բաղդասարյան (*Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ*)

**Օրակարգի նախագծում` յոթ հարց.**

1. Տնային տնտեսությունների տվյալների մուտքագրման և հասցեների բազայի ստեղծման մասին ուղեցույցը հաստատելու մասին.

*/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան/*

2. Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպության հաշմանդամ խնամյալի հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

*/Ներկայացնող՝ Ն. Բաղդասարյան/*

3. Մանկական խնամատարական կազմակերպության հաշմանդամ խնամյալի հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

*/Ներկայացնող՝ Ն. Բաղդասարյան/*

4. Հաշմանդամների կենսապայմանների հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

*/Ներկայացնող՝ Ն. Բաղդասարյան/*

5. Մանկական խնամատարական կազմակերպության գործունեության հետազոտության հարցաթերթը (լրացվում է տնօրենի կողմից) և լրացման հրահանգը հաստատելու մասին.

*/Ներկայացնող՝ Ն. Բաղդասարյան/*

6. Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպության գործունեության հետազոտության հարցաթերթը (լրացվում է տնօրենի կողմից) և լրացման հրահանգը հաստատելու մասին.

*/Ներկայացնող՝ Ն. Բաղդասարյան/*

7. Այլ հարցեր

Նախագահի կողմից ներկայացվեց Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. Տնային տնտեսությունների տվյալների մուտքագրման և հասցեների բազայի ստեղծման մասին ուղեցույցը հաստատելու մասին.

*/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան/*

Նշվեց, որ 2001թ. անցկացված մարդահամարի արդյունքների հիման վրա ՀՀ տնային տնտեսությունների տվյալների մուտքագրման և հասցեների բազայի ստեղծման TF 050823 բազմադոնոր դրամաշնորհի միջոցներով իրականացվող ծրագրի մասնագետների կողմից մշակված մուտքի ծրագրի և տվյալների մուտքագրման ընթացքը հսկող «Supervisor» համակարգի շահագործման նպատակով անհրաժեշտություն է

առաջացել մշակել «Տնային տնտեսությունների տվյալների մուտքագրման և հասցեների բազայի ստեղծման մասին ուղեցույց»:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել Տնային տնտեսությունների տվյալների մուտքագրման և հասցեների բազայի ստեղծման մասին ուղեցույցը:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**2. Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպության հաշմանդամ խնամյալի հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին.**

*/Ներկայացնող՝ Ն. Բաղդասարյան/*

Նշվեց, որ հետազոտության նպատակն է ուսումնասիրել հարցումներում ամբողջապես ընդգրկված հանրապետության տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների հաշմանդամ խնամյալների կենսապայմանները:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպության հաշմանդամ խնամյալի հարցաթերթը և լրացման հրահանգը:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**3. Մանկական խնամատարական կազմակերպության հաշմանդամ խնամյալի հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին.**

*/Ներկայացնող՝ Ն. Բաղդասարյան/*

Նշվեց, որ հետազոտության նպատակն է ուսումնասիրել հարցումներում ամբողջապես ընդգրկված մանկական խնամատարական կազմակերպությունների հաշմանդամ խնամյալների կենսապայմանները:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել Մանկական խնամատարական կազմակերպության հաշմանդամ խնամյալի (14 և բարձր տարիքի) հարցաթերթը և լրացման հրահանգը

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**4. Հաշմանդամների կենսապայմանների հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին.**

*/Ներկայացնող՝ Ն. Բաղդասարյան/*

Նշվեց, որ հետազոտության հարցաթերթով հետազոտվելու են տնային տնտեսությունների 1200 հաշմանդամներ: Հետազոտության գլխավոր համակցություններն են առնվազն մեկ հաշմանդամ ունեցող ընտանիքների հասցեական բազան և հաշմանդամների ցուցակային բազան՝ հիմք ընդունելով ՀՀ սոցիալական ապահովության նախարարության տրամադրած 2003թ. մարտ ամսվա դրությամբ տնօրինած տեղեկատվությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել Հաշմանդամների կենսապայմանների հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**5. Մանկական խնամատարական կազմակերպության գործունեության հետազոտության հարցաթերթը (լրացվում է տնօրենի կողմից) և լրացման հրահանգը հաստատելու մասին.**

*/Ներկայացնող՝ Ն. Բաղդասարյան/*

Նշվեց, որ հաշմանդամների մասին տեղեկատվությունն ամբողջականացնելու նպատակով /մասնավորապես՝ շենքային պայմանները, հաշմանդամների ապահովվածությունն անհրաժեշտ պարագաներով և այլն/ հարցումներում ընդգրկվելու են հանրապետության մանկական խնամատարական կազմակերպությունների տնօրենները:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել Մանկական խնամատարական կազմակերպության գործունեության հետազոտության հարցաթերթը (լրացվում է տնօրենի կողմից) և լրացման հրահանգը:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**6. Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպության գործունեության հետազոտության հարցաթերթը (լրացվում է տնօրենի կողմից) և լրացման հրահանգը հաստատելու մասին.**

*/Ներկայացնող՝ Ն. Բաղդասարյան/*

Նշվեց, որ հաշմանդամների մասին տեղեկատվությունն ամբողջականացնելու նպատակով /մասնավորապես՝ շենքային պայմանները, հաշմանդամների ապահովվածությունն անհրաժեշտ պարագաներով և այլն/ հարցումներում ընդգրկվելու են հանրապետության տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների տնօրենները:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպության գործունեության հետազոտության հարցաթերթը (լրացվում է տնօրենի կողմից) և լրացման հրահանգը:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**7. Այլ հարցեր**

7.1 «ՀՀ 2004-2006 թթ. պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի» նախագծի մասին.

*/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան/*

Նշվեց, որ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի կողմից պատրաստվել է Եռամյա Ծրագրի նախագիծը և ներկայացվել ՀՀ ՎՊԽ անդամներին՝ կարծիքի: Նախագահի կողմից հանձնարարվեց.

Խորհրդի անդամներին՝ Ծրագրի նախագծի վերաբերյալ դիտողություններն ու առաջարկությունները ներկայացնել մինչև ս.թ. հունիսի 12-ը,

Գ. Գյուրջյանին՝ 16.06.03թ. զեկուցել արդյունքների մասին ՀՀ ԱՎԾ նախագահի մոտ կայանալիք խորհրդակցության ժամանակ:

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան